



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Աշխատունակության Վերականգնողական Ծառայությունների գործի փակման տեղեկագիր

Նոյեմբեր 2015թ., հրապ. # F074.10 - Armenian

Ի՞նչ է նշանակում, երբ Վերականգնողական Բաժինը (DOR, Department of Rehabilitation) տեղեկացնում է, որ իմ գործը փակված է:

Գործը փակված է, երբ DOR-ը որոշում է, որ այն այլևս Ձեզ աշխատունակության վերականգնողական ծառայություններ չի տրամադրելու: Կալիֆորնիայի Վարչական Օրենսգրքի (C.C.R., California Code of Regulations) 9 բաժնի 7179-ից մինչև 7181.1 կետերն օրենքով սահմանում են DOR-ի և հիվանդի պարտականությունները՝ կապված գործի փակման հետ:

Ե՞րբ կարող է DOR-ը փակել իմ գործը:

Ըստ օրենքի, DOR-ը կարող է փակել Ձեր գործը, երբ.

- Դուք հասել եք Ձեր զբաղվածության նպատակին և այլևս DOR-ի ծառայությունների կարիքը չունեք Ձեր աշխատանքը պահպանելու համար և DOR-ը Ձեր Չբաղվածության անհատականացված ծրագրում (IPE, Individualized Plan for Employment) տրամադրել է համաձայնեցված բոլոր ծառայությունները.
- Դուք իրավունակ չեք համարվում DOR-ի որոշ ծառայություններ ստանալու համար՝ ըստ որոշակի չափանիշների, այդ թվում այն, որ Ձեր հաշմանդամությունն այնքան ծանր է, որ Դուք չեք կարող օգտվել DOR-ի ծառայություններից.

- Դուք ընտրել եք չմասնակցել DOR-ի ծրագրին կամ Դուք չեք կարող մասնակցել DOR-ի ծրագրին այլ պատճառով: Օրինակները ներառում են, այն դեպքերը, երբ Դուք լուրջ առողջական խնդիրներ ունեք, որոնք թույլ չեն տալիս Ձեզ մասնակցել DOR-ի ծրագրին, նույնիսկ պատշաճ հարմարեցումներով: Եթե Դուք հրաժարվում եք կամ մատչելի չեք DOR-ի՝ իրավունակության նպատակներով անցկացվող գնահատումներին մասնակցելու համար: Եթե DOR-ը չունի ներկայիս կոնտակտային տվյալները և չի կարողանում գտնել Ձեզ: Եթե Դուք երկար ժամանակ գտնվում եք ինչ-որ հաստատությունում, օրինակ՝ հիվանդանոցում կամ բանտում, կամ DOR-ի ծառայություններից օգտվելիս Դուք ներգրավվել եք հանցավոր գործունեության մեջ:

Ինչպե՞ս ես կտեղեկանամ, որ DOR-ը փակել է իմ գործը:

DOR-ը պետք է Ձեզ գրավոր ծանուցում ուղարկի՝ հայտնելով, որ Ձեր գործը փակվել է: Ծանուցումն անհրաժեշտ է՝ տեղեկանալու, թե ինչո՞ւ է Ձեր գործը փակվել, տեղեկություններ Ձեր բողոքարկման իրավունքների մասին, այդ թվում միջնորդություն, վարչական մարմնի որոշման վերանայման, արդար լսման գործընթացի, և Հաճախորդի Աջակցության Ծրագրի (CAP, Client Assistance Program) վերաբերյալ:

Ի՞նչ կարող եմ անել, եթե համաձայն չեմ DOR-ի՝ իմ գործը փակելու որոշման հետ:

DOR-ն ունի բողոքարկման տարբեր մակարդակներ: Բողոքարկման առաջին մակարդակը Ձեր վերականգնողական խորհրդատուի և /կամ Ձեր խորհրդատուի վերահսկիչի հետ Ձեր գործի փակման մասին քննարկումն ունի է: Այս գործընթացը կարող է աշխատել, օրինակ, երբ Ձեր DOR գործը փակվել է, որովհետև Ձեզ չեն կարողացել գտնել, սակայն ավելի ուշ կապվել եք DOR-ի հետ, կամ, այն իրավիճակներում, երբ Դուք իրականում Ձեր IPE նպատակի հետ կապված առաջընթաց եք արձանագրել, սակայն DOR-ը տեղյակ չէ Ձեր առաջընթացից: Հնարավոր է, որ DOR-ից պահանջեն վերանայել Ձեր փակված գործը՝ Ձեր դիմումի հիման վրա, եթե Ձեր գործը փակվել է նախորդ 12 ամիսների ընթացքում: Որոշ հանգամանքներում DOR-ը կհամաձայնի կրկին բացել Ձեր գործը, եթե Դուք ցույց տաք, որ պատրաստ եք Ձեր IPE նպատակի

հետ կապված առաջընթաց արձանագրել կամ համապատասխանել DOR-ի պահանջներին:

Եթե Դուք համաձայն չեք DOR-ի` Ձեր գործը փակելու որոշման հետ, Դուք կարող եք պահանջել վարչական մարմնի որոշման վերանայում DOR-ի Համայնքային Կառավարչի (District Administrator) կողմից, միջնորդություն ներկայացնել և /կամ արդար լսում պահանջել DOR-ի որոշումից հետո մեկ տարվա ընթացքում: Ձեր բողոքարկման իրավունքների և ժամանակահատվածի մասին, որոնք կարող են կիրառվել Ձեր դեպքում, հավելյալ տեղեկատվության համար այցելե՛ք DOR-ի հղումով`

<http://www.rehab.cahwnet.gov/Appeals/FairHearForms.html#DR107:>

Ես կարո՞ղ եմ իմ գործը փակվելուց հետո կրկին դիմել DOR ծառայություններ ստանալու համար:

Այո՛, Դուք կարող եք կրկին դիմել ծառայությունների համար, եթե կրկին DOR-ի ծառայությունների կարիքն ունեք: DOR-ը պետք է իրավունակության որոշում կայացնի և Ձեզ օգնի մշակել նոր IPE:

DOR-ը կարող է նաև հաշվի առնել Ձեր նախորդ DOR գործում առկա տեղեկությունները Ձեր ծառայություններին համապատասխանությունը որոշելիս, երբ կրկին դիմեք DOR ծառայությունների համար: DOR-ի համապատասխանության մասին տեղեկություններ ստանալու համար տես CAP-ի տեղեկագիրը` վերանգրված Eligibility for Vocational Rehabilitation Services, հետևյալ կայքում`

<http://www.disabilityrightsca.org/pubs/06601.pdf>

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք`

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.